ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ N 2

«ԾՔ-ԳՀԽԾՁԲ-25/6» ծածկագրով գնանշման հարցման ընթացակարգով Ծաղկաձորի համայնքապետարանի կարիքների համար «Նախագծերի պատրաստման,ծախսերի գնահատման խորհրդատվական ծառայություններ»-ի գնման ընթացակարգի գնահատող հանձնաժողովի հայտերի բացման և գնահատման նիստի

ք.Ծաղկաձոր

29 ապրիլ 2025թ.-
08 մայիս 2025թ.

2025թ. ապրիլի 29-ից մինչև մայիսի 08-ը, Կոտայքի մարզ, Ծաղկաձոր համայնք,ք.Ծաղկաձոր,Օրբելի եղբայրների 9 հասցեում գտնվող Ծաղկաձորի համայնքապետարանի վարչական շենքում տեղի ունեցավ **«Նախագծերի պատրաստման,ծախսերի գնահատման խորհրդատվական ծառայություններ»-ի** ձեռքբերման նպատակով **«ԾՔ-ԳՀԽԾՁԲ-25/6»** ծածկագրով գնման ընթացակարգի (այսուհետ՝ Ընթացակարգ) գնահատող հանձնաժողովի (այսուհետ՝ Հանձնաժողով) նիստը:

Մասնակցում էին՝ Հանձնաժողովի նախագահ՝ Ծաղկաձոր համայնքի «ԱՐԾԱՓ» համայնքային ոչ առևտրային կազմակերպության տնօրեն Գագիկ Բաբաջանյան /ԳՊ ԳԱՊ/:
Անդամներ՝
համայնքապետարանի աշխատակազմի զարգացման ծրագրերի, զբոսաշրջության, առևտրի,սպասարկման և գովազդի բաժնի առաջատար մասնագետ /զարգացման ծրագրեր/ Իշխան Եղիազարյան (գնահատող անդամ) :
Մեղրաձոր բնակավայրի վարչական ղեկավար Վոլոդյա Հովհաննիսյան (բացող անդամ):
համայնքապետարանի աշխատակազմի իրավաբանական, քարտուղարության, անձնակազմի կառավարման բաժնի գլխավոր մասնագետ/բարեվարքության կազմակերպիչ/ Սամվել Ալոյան (բացող անդամ):
համայնքապետարանի աշխատակազմի քաղաքաշինության, հողաշինության,գյուղատնտեսության և բնապահպանության բաժնի առաջատար մասնագետ՝ Հայկ Բաբայանը բացակայում է:

Հաշվի առնելով, որ Հանձնաժողովի կազմը բաղկացած է հինգ անդամից,իսկ Հանձնաժողովի նիստին մասնակցում էին Հանձնաժողովի չորս անդամները, հետևաբար՝ ՀՀ կառավարության 2017թ. մայիսի 04-ի N 526-Ն որոշմամբ հաստատված կարգի 26-րդ կետի 2-րդ ենթակետով սահմանված պահանջների համաձայն, Հանձնաժողովի նիստը համարվեց իրավազոր և հայտարարվեց բացված:

1. ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ ՆԻՍՏԻ ՕՐԱԿԱՐԱԳԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հանձնաժողովը որոշեց հաստատել Հանձնաժողովի նիստի հետևյալ օրակարագը.

1.Հանձնաժողովի նիստի օրակարագը հաստատելու մասին:
2.Գնման հայտով սահմանված՝ ընթացակարգի շրջանակում գնվելիք ծառայության գնման գնի մասին:
3.Ընթացակարգին հայտ ներկայացրած մասնակիցների, ներկայացված հայտերը,ինչպես նաև ոչ գնային պայմանները գնահատելու մասին:
4.Ընթացակարգի մասնակիցների առաջարկած գների,ընտրված և այդպիսին չճանաչված մասնակիցների վերաբերյալ տվյալների մասին:
5.Ընթացակարգի ընտրված մասնակցին հայտարարելու մասին:
6. Հայտարարությունների և անգործության ժամանակահատված կիրառելու կամ չկիրառելու մասին:
7.Կատարված հարցումների,պարզաբանումների,հիմնավորումների և հրավերում կատարված փոփոխությունների,հակաօրինական գործողությունների,ներկայացված բողոքների մասին:
8. Պայմանագրի նախագիծը հաստատելու մասին:
9. **«ԾՔ-ԳՀԽԾՁԲ-25/6»** ծածկագրով գնման ընթացակարգի 2-րդ չափաբաժինը չկայացած հայտարարելու մասին:

Կողմ՝ 4,դեմ՝ 0:

2. ԳՆՄԱՆ ՀԱՅՏՈՎ ՍԱՀՄԱՆՎԱԾ՝ ԸՆԹԱՑԱԿԱՐԳԻ ՇՐՋԱՆԱԿՈՒՄ ԳՆՎԵԼԻՔ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԳՆՄԱՆ ԳՆԻ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով ՀՀ Կառավարության 2017թ. մայիսի 4-ի N 526-Ն որոշմամբ հաստատված «Գնումների գործընթացի կազմակերպման» Կարգի /այսուհետ՝ Կարգ/ 40-րդ կետի 1-ին ենթակետով՝ հանձնաժողովի նախագահը հայտարարեց նիստը բացված և հրապարակեց գնման հայտով սահմանված՝ սույն ընթացակարգի շրջանակում գնվելիք ծառայությունների գնման գները՝ մեկ թվով արտահայտված.

Հ/հ	*Ծառայության անվանումը*	*Չափաբաժնի ընդհանուր գնման գինը*

1	«Ծաղկաձոր համայնքի Մեղրաձոր բնակավայրի թվով 6 բազմաբնակարան շենքերի տանիքների, մուտքերի, միջանցքների վերանորոգման աշխատանքների նախագծերի պատրաստման, ծախսերի գնահատման խորհրդատվական ծառայություններ»	3 000 000
2	« Ծաղկաձոր համայնքի Մեղրաձոր բնակավայրի թվով 6 բազմաբնակարան շենքերի բակերի ասֆալտապատման,ջրագծերի և կոյուղագծերի վերանորոգման աշխատանքների նախագծերի պատրաստման, ծախսերի գնահատման խորհրդատվական ծառայություններ»	2 500 000

«ԾՔ-ԳՀԽԾՁԲ-25/6» ծածկագրով ընթացակարգի հայտերի ներկայացումն ու բացումը նախատեսված էր https:// armeps.am/ կայքի միջոցով՝ հրավերով և համակարգով սահմանված օրը և ժամին:
Կողմ՝ 4,դեմ՝ 0:
Հանձնաժողովը որոշեց.
1.Ներկայացված տեղեկատվությունը ընդունել ի գիտություն:
Կողմ՝ 4,դեմ՝ 0:

3. ԸՆԹԱՑԱԿԱՐԳԻՆ ՀԱՅՏ ՆԵՐԿԱՅԱՑՐԱԾ ՄԱՍՆԱԿԻՑՆԵՐԻ, ՆԵՐԿԱՅԱՑՎԱԾ ՀԱՅՏԵՐԸ,ԻՆՉՊԵՍ ՆԱԵՎ ՈՉ ԳՆԱՅԻՆ ՊԱՅՄԱՆՆԵՐԸ ԳՆԱՀԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ

3.1 «ԾՔ-ԳՀԽԾՁԲ-25/6» ծածկագրով ընթացակարգին մասնակցելու հայտեր են ներկայացրել հետևյալ անձինք /այսուհետ՝ նաև մասնակիցներ/.

Հ/Հ	*Մասնակցի անվանումը*	*Հասցե,հեռ.*	*Էլ.փոստ*	*ՀՎՀՀ*
1.	*«Վանաձորի Նախագծող» ՍՊԸ*	ՀՀ, Լոռու մարզ ք. Վանաձոր, տիգրան Մեծ 22 077 998 887	Yannakh2014@mail.ru	06922308
2.	*«ԷԼԵԿՇԻՆ» ՍՊԸ*	ք. Վանաձոր, Ավետիսյան փ., 9-1 098 110 029	Elekshin2020@gmail.com	06958912
3.	*«Ա-Էն Փրոջեկտ» ՍՊԸ*	ՀՀ, ք. Երևան, նանսենի 1 նրբ. 5 շ. 23 բն 077 245 674	An-project-n@mail.ru	01060203
4.	*«Նյու Արտ Նախագիծ» ՍՊԸ*	Բաղրամյան 79 098 121 821	artdaniell@gmail.com	01024014

2025թ. մայիսի 2-ին ընթացակարգի մասնակցության հայտերը գնահատելիս Հանձնաժողովն արձանագրեց, որ մասնակիցների կողմից ներկայացված հայտում առկա են անհամապատասխանություններ հրավերի պահանջների նկատմամբ,մասնավորապես՝

- ***«Վանաձորի նախագծող» ՍՊԸ*** *– Չի ներկայացվել նախկինում կատարված համանման պայմանագրի քաղաքաշինական փորձաքննության դրական եզրակացությունը:*

- ***«Ա-ԷՆ ՓՐՈՋԵԿՏ» ՍՊԸ****- Չեն ներկայացվել առաջադրված աշխատակազմում ներգրավված մասնագետի անձը հաստատող փաստաթուղթը, որակավորումը հավաստող փաստաթուղթը, չի ներկայացվել ճարտարապետի արտոնագիրը,մասնագետի հաստատած գրավոր համաձայնությունը՝ իրականացվելիք աշխատանքներում վերջինիս ներգրավվելու մասին:*

- ***«Նյու Արտ Նախագիծ» ՍՊԸ*** *– Չի ներկայացվել նախկինում կատարված համանման պայմանագրի քաղաքաշինական փորձաքննության դրական եզրակացությունը: Չեն ներկայացվել առաջադրված աշխատակազմում ներգրավված մասնագետի անձը հաստատող փաստաթուղթը, որակավորումը հավաստող փաստաթուղթը, մասնագետի հաստատած գրավոր համաձայնությունը՝ իրականացվելիք աշխատանքներում վերջինիս ներգրավվելու մասին:*

Ղեկավարվելով ՀՀ կառավարության 04/05/17թ. N 526-Ն որոշմամբ հաստատված <<Գնումների գործընթացի կազմակերպման կարգի>> 41-րդ կետով՝ Հանձնաժողովը որոշեց՝ **մեկ աշխատանքային օրով**

կասեցնել գնահատող հանձնաժողովի նիստը, ծանուցում ուղարկել մասնակցին և առաջարկել մեկ աշխատանքային օրվա ընթացքում /05.05.2025թ. ներառյալ/ շտկել անհամապատասխանությունները:

2025թ. մայիսի 6-ին կայացած նիստում Հանձնաժողովն ընդունեց ի գիտություն, որ *«Ա-ԷՆ ՓՐՈՋԵԿՏ» ՍՊԸ* -ի և «Նյու Արտ Նախագիծ» ՍՊԸ-ի կողմից սահմանված ժամկետում շտկվել են արձանագրված անհամապատասխանությունները:Իսկ *«Վանաձորի նախագծող» ՍՊԸ-ի կողմից շտկում չի իրականացվել:*

Հանձնաժողովի կողմից մասանկիցների կողմից ներկայացված հայտերը գնահատվել են հետևյալ կերպ՝

Մասնակիցների անվանումները	*Իրականացված գնահատման արդյունքը*
«Վանաձորի Նախագծող» ՍՊԸ	Բավարար
«ԷԼԵԿՇԻՆ» ՍՊԸ	Բավարար
«Ա-Էն Փրոջեկտ» ՍՊԸ	Բավարար
«Նյու Արտ Նախագիծ» ՍՊԸ	Բավարար

2.2 Հանձնաժողովը որոշեց՝ սահմանված կարգով գնահատել մասնակիցների ոչ գնային պայմանները:

Ոչ գնային չափանիշները գնահատող հանձնաժողովի որոշմամբ գնահատվել են հետևյալ կարգով.

Ոչ գնային չափանիշներ	*Գնահատման չափանիշը*		
Մասնակիցների անվանումները	*Մասնագիտական փորձառություն*	*Աշխատանքային ռեսուրսներ*	*Ընդամենը*
«Վանաձորի Նախագծող» ՍՊԸ	20	30	50
«ԷԼԵԿՇԻՆ» ՍՊԸ	40	30	70
«Ա-Էն Փրոջեկտ» ՍՊԸ	40	30	70
«Նյու Արտ Նախագիծ» ՍՊԸ	40	30	70

Գնային պայմանը գնահատվել է հետևյալ կարգով /**համաձայն հրավերով սահմանված բանաձևի**/.

Մասնակիցների անվանումները	*Գնային պայմանի գնահատականը*	
	Չափաբաժին 1	*Չափաբաժին 2*
«Վանաձորի Նախագծող» ՍՊԸ	19.8	-
«ԷԼԵԿՇԻՆ» ՍՊԸ	30	-
«Ա-Էն Փրոջեկտ» ՍՊԸ	21.35	-
«Նյու Արտ Նախագիծ» ՍՊԸ	28.07	-

Բավարար գնահատված յուրաքանչյուր մասնակցին տրվող գնահատականը գնահատվել է հետևյալ կարգով /**համաձայն հրավերով սահմանված բանաձևի**/.

Մասնակիցների անվանումները	Մասնակիցներին տրված ընդհանուր գնահատականը (ՄԳ)	
	Չափաբաժին 1	*Չափաբաժին 2*
«Վանաձորի Նախագծող» ՍՊԸ	28.86	-
«ԷԼԵԿՇԻՆ» ՍՊԸ	42	-
«Ա-Էն Փրոջեկտ» ՍՊԸ	35.94	-
«Նյու Արտ Նախագիծ» ՍՊԸ	40.64	-

Կողմ՝ 4,դեմ՝ 0:

4. ԸՆԹԱՑԱԿԱՐԳԻ ՄԱՍՆԱԿԻՑՆԵՐԻ ԱՌԱՋԱՐԿԱԾ ԳՆԵՐԻ,ԸՆՏՐՎԱԾ ԵՎ ԱՅԴՊԻՍԻՆ ՉՃԱՆԱՉՎԱԾ ՄԱՍՆԱԿԻՑՆԵՐԻ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ ՏՎՅԱԼՆԵՐԻ ՄԱՍԻՆ

2025թ. մայիսի 7-ին Հանձնաժողովի նախագահը հայտարարեց հայտեր ներկայացրած մասնակիցների գնային առաջարկները:

Ներկայացված գնային առաջարկների և մասնակիցների՝ ընտրված լինելու վերաբերյալ տեղեկատվությունը ներառված է ստորև ներկայացված աղյուսակում:

Չափաբաժին	*Մասնակցի անվանումը*	*Արժեք*	*ԱՀՀ*	*Ընդհանուր գինը*	*Մասնակցի կարգավիճակ /ընտրված մասնակցի դեպքում X/*
1. «Ծաղկաձոր համայնքի Մեղրաձոր բնակավայրում ժամանակակից մարզասրահի կառուցման նպատակով առկա ոչ բնակելի տարածքի վերանորոգման վերանորոգման նախագծերի պատրաստման,ծախսերի գնահատման խորհրդատվական ծառայություններ»	*«ԷԼԵԿՇԻՆ» ՍՊԸ*	1 749 900	-	1 749 900	*X*
	«Նյու Արտ Նախագիծ» ՍՊԸ	1 870 000	-	1 870 000	
	«Ա-Էն Փրոջեկտ» ՍՊԸ	2 458 000	-	2 458 000	
	«Վանաձորի ախագծող» ՍՊԸ	2 640 000	-	2 640 000	

Մասնակիցների գնային առաջարկների հաշվարկման ճշգրտությունը /տառերով,ինչպես նաև հաշվարկի թվաբանական ճշգրտությունը/ համապատասխանում է (ճիշտ է):

Կողմ՝ 4,դեմ՝ 0:

5. ԸՆԹԱՑԱԿԱՐԳԻ ԸՆՏՐՎԱԾ ՄԱՍՆԱԿՑԻՆ ՀԱՅՏԱՐԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

2025թ. մայիսի 7-ին կայացած նիստում Հանձնաժողովը որոշեց՝ «ԾՔ-ԳՀԽԾՁԲ-25/6» ծածկագրով գնման ընթացակարգի 1-ին չափաբաժնի արդյունքում ընտրված մասնակից հայտարարել՝ *«ԷԼԵԿՇԻՆ» ՍՊԸ* -ին՝ որպես բավարար գնահատված, ամենացածր գնային առաջարկ ներկայացրած և ամենաբարձր գնահատական (ՄԳ) ստացած մասնակից:

Կողմ՝ 4,դեմ՝ 0:

6. ՀԱՄԱԿԱՐԳԻ ՄԻՋՈՑՈՎ ԳԵՆԵՐԱՑՎԱԾ ՀԱՅՏԱՐԱՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԵՎ ԱՆԳՈՐԾՈՒԹՅԱՆ ԺԱՄԱՆԱԿԱՀԱՏՎԱԾ ԿԻՐԱՌԵԼՈՒ ԿԱՄ ՉԿԻՐԱՌԵԼՈՒ ՄԱՍԻՆ

2025թ. մայիսի 8-ին կայացած նիստում Հանձնաժողովի քարտուղար Ա.Ավետիսյանը ներկայացրեց գնահատող հանձնաժողովի կողմից իրականացված գնահատումների արդյունքում՝ պայմանագիր կնքելու որոշման մասին հայտարարություն /ներ/ի տեքստ/եր/ը:

Հանձնաժողովը որոշեց.

1. **1-ին չափաբաժնի մասով «Գնումների մասին» օրենքի 10-րդ հոդվածի 3-րդ մասի համաձայն՝ անգործության ժամկետ սահմանել պայմանագիր կնքելու որոշման մասին հայտարարությունը հրապարակելու օրվան հաջորդող օրվանից մինչև 10-րդ օրացուցային օրը ներառյալ ընկած ժամանակահատվածը:**
2. Հաստատել պայմանագիր կնքելու որոշման մասին հայտարարություն/ներ/ի տեքստ/եր/ը:

Կողմ՝ 4, դեմ՝ 0:

7. ԿԱՏԱՐՎԱԾ ՀԱՐՑՈՒՄՆԵՐԻ,ՊԱՐԶԱԲԱՆՈՒՄՆԵՐԻ,ՀԻՄՆԱՎՈՐՈՒՄՆԵՐԻ ԵՎ ՀՐԱՎԵՐՈՒՄ ԿԱՏԱՐՎԱԾ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ,ՀԱԿԱՕՐԻՆԱԿԱՆ ԳՈՐԾՈՂՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ,ՆԵՐԿԱՅԱՑՎԱԾ ԲՈՂՈՔՆԵՐԻ ՄԱՍԻՆ

Հանձնաժողովը արձանագրեց, որ.

1. Ընթացակարգի հրավերում փոփոխություններ չեն կատարվել:
2. Գնման վերաբերյալ հարցումներ չեն ներկայացվել, պարզաբանումներ չեն տրամադրվել:
3. Գնման գործընթացի շրջանակներում հակաօրինական գործողություններ չեն հայտնաբերվել:
4. Գնման գործընթացի վերաբերյալ ներկայացված բողոքներ չեն եղել և դրանց վերաբերյալ կայացված որոշումներ չեն ընդունվել:

Կողմ՝ 4,դեմ՝ 0:

8. ՊԱՅՄԱՆԱԳՐԻ ՆԱԽԱԳԻԾԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ

2025թ. մայիսի 8-ին կայացած նիստում Հանձնաժողովի քարտուղարը Հանձնաժողովի անդամներին ներկայացրեց կնքվելիք պայմանագրի նախագիծը: Հանձնաժողովը որոշեց.

1. Հաստատել կնքվելիք պայմանագրի նախագիծը:
2. Հանձնաժողովի քարտուղարին հանձնարարել պատվիրատուի կողմից պայմանագիրը կնքելու իրավասության առաջացման օրը ընտրված ճանաչված մասնակցին էլեկտրոնային փոստի և համակարգի միջոցով ծանուցել պայմանագիր կնքելու առաջարկը և պայմանագրի նախագիծը, միաժամանակ տեղեկացնելով, որ ծանուցման մեջ նշված ժամկետում վերջինիս կողմից պայմանագիրը չստորագրելու և պայմանագրի և որակավորման ապահովումները չներկայացնելու դեպքում ընկերությունը կզրկվի պայմանագիրը ստորագրելու իրավունքից՝ համաձայն «Գնումների մասին» օրենքի 36-րդ հոդվածի 3-րդ մասով սահմանված պահանջների:

Կողմ՝ 4 դեմ՝ 0:

9. «ԾՔ-ԳՀԽԾՁԲ-25/6» ԾԱԾԿԱԳՐՈՎ ԳՆՄԱՆ ԸՆԹԱՑԱԿԱՐԳԻ 2-ՐԴ ՉԱՓԱԲԱԺԻՆԸ ՉԿԱՅԱՑԱԾ ՀԱՅՏԱՐԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

2025թ. մայիսի 8-ին կայացած նիստում Հանձնաժողովը որոշեց.

9.1 Հիմք ընդունելով «Գնումների մասին» օրենքի 37-րդ հոդվածի 1-ին մասի 3-րդ կետը՝ «ԾՔ-ԳՀԽԾՁԲ-25/6» ծածկագրով ընթացակարգի 2-րդ չափաբաժինը հայտարարել չկայացած /ոչ մի հայտ չի ներկայացվել/:

9.2 Հաստատել «ԾՔ-ԳՀԽԾՁԲ-25/6» ծածկագրով ընթացակարգի 2-րդ չափաբաժինը չկայացած հայտարարելու մասին հայտարարության տեսքը:

Կողմ՝ 4,դեմ՝ 0:

Հանձնաժողովի նախագահ՝
Գագիկ Բաբաջանյան ----------

Հանձնաժողովի անդամներ՝
Վոլոդյա Հովհաննիսյան՝----------

Իշխան Եղիազարյան՝----------

Սամվել Ալոյան՝----------

Հանձնաժողովի քարտուղար՝
Ա.Ավետիսյան ----------